Ազգ

Այսօր Ալմաթիում իրենց հերթական գագաթաժողովն են սկսում ԱՊՀ երկրների ղեկավարները: Ինչպես տեղեկացանք ՌԴ ԱԳՆ աղբյուրներից, օրակարգի առաջին հարց են դրված ֆաշիզմի դեմ տարված հաղթանակի 50-ամյակի նշման համատեղ միջոցառումները: Ըստ տեղեկությունների, գագաթաժողովի մասնակիցները մտադիր են հիշատակման տարելիցի կապակցությամբ դիմել իրենց ԱՊՀ ժողովուրդներին եւ միջազգային հասարակայնությանը:

[illegible]

## ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# Ալմաթիի գագաթաժողովը կշարունակի սերտաճման գործընթացները

[illegible]

[illegible]

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Համաշխարհային տնտեսական հանրակցության մեջ ներգրավվելու լուրջ առաջընթաց

ՄՈՍԿՎԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՌՈՒՍ ՍՆԱՐՔ: «1994 թ. Ռուսաստանին հաջողվեց լուրջ առաջընթաց ապահովել համաշխարհային տնտեսական հանրակցության մեջ համահավասար պայմաններով ներգրավվելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղղությամբ», մամուլի ասուլիսում շորեքշաբթի հայտարարել է Ռուսաստանի փոխվարչապետ Օլեգ Դավիդովը: Ի մի բերելով կառավարության արտաքին տնտեսական գործունեության արդյունքները նա այս ապարեզում կարեւոր ձեռքբերում է համարել Եվրոպական միության հետ գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի եւ Եվրոպական էներգետիկ խարտիայի հետ պայմանագրի ստորագրումը, ինչպես նաեւ համաշխարհային առեւտրական կազմակերպության մեջ Ռուսաստանին ընդգրկելու ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները:

*Ռուս-ուկրաինական բանակցություններն ավարտվեցին*

# Սեւաստոպոլը Սեւծովյան նավատորմի գլխավոր բազա

ԿԻԵՎ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԻՆՏԵՐՖԱՔՍ: Փետրվարի 8-ին Կիեւում ավարտվել են Ուկրաինայի եւ Ռուսաստանի կառավարական պատվիրակությունների բանակցությունները: Ուկրաինայի փոխվարչապետ Եւգենի Մարչուկը բանակցությունների հիմնական արդյունքը համարել է բարեկամության եւ համագործակցության ծավալուն երկկողմ պայմանագրի տեքստի նախապատրաստումը, որը հնարավորություններ է ստեղծում ՌԴ նախագահ Ելցինի Կիեւ կատարելիք այցի համար: Բանակցող կողմերը նաեւ փոխհամաձայնեցրել են «Սեւծովյան նավատորմի հիմնախնդիրները կարգավորելու մասին» հայտարարագրի հիմնական սկզբունքները: Ըստ այդ հայտարարագրի, Սեւաստոպոլը պետք է լինի Սեւծովյան նավատորմի գլխավոր բազան: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաեւ էներգակիրների համար Կիեւի Ռուսաստանին ունեցած պարտքի հիմնահարցը: ՌԴ կառավարության փոխվարչապետ Օլեգ Սոսկովեցի կարծիքով, Ուկրաինայի պարտքերի հիմնական պատճառն այն է, որ ի տարբերություն Ռուսաստանի, այդ երկրում վաս են զարգացած շուկայական մեխանիզմները եւ կառույցները:

# «Գրոզնին պետք է վերականգնել համառուսական անհատույց օգնությամբ»

ՍՏԱՎՐՈՊՈԼ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԻՆՏԵՐՖԱՔՍ: Ստավրոպոլի երկրամասային դումայի նախագահ Վալերի Չերենկովը երեկ «Ստավրոպոլսկայա պրավդա» թերթի հարցազրույցում հայտարարել է, թե ՌԴ կառավարության մի բարձրաստիճան պաշտոնյա իրեն Մոզդոկում տեղեկացրել է, որ Գրոզնին 40-50 տոկոսով ավերված է: Քաղաքի շենքերից շատերը վերականգնել հնարավոր չէ, ինչպես Տաշքենդի երկրաշարժից հետո: Ռուսաստանի պետական բյուջեի միջոցները քաղաքը վերականգնելու համար ամենեւին չեն բավարարի: Այդ պատճառով Ռուսաստանի առանձին շրջաններ ստիպված պետք է լինեն իրենց անհատույց օգնություն ցույց տալ Չեչնիային: Երկրամասային դումայի խոսնակը նաեւ նշել է, թե ոչ մի տրամաբանություն չի տեսնում Մոսկվայի ձեռնարկած քայլի մեջ, ըստ որի մարդասիրական բեռները օդային ճանապարհով բերվում են Մախաչկալա, Վլադիկավկազ եւ Նալչիկ:

«Կարծես թե մոռացել են Հյուսիսային Կովկասի Միներալնիե Վոդի եւ Ստավրոպոլ քաղաքներում գտնվող խոշորագույն օդանավակայանների մասին, բողոքել է Չերենկովը: Այդ մոռացկոտության պատճառով չէ՞, որ մարդասիրական բեռները չեն հասնում ուղեգրու բնակչությանը, այլ հայտնվում են Հյուսիսկովկասյան հանրապետությունների շուկաներում», ասել է դումայի խոսնակը:

## ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Ժիրինովսկին պահանջեց Երինի եւ Ռիբկինի հրաժարականը

ՄՈՍԿՎԱ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ՌՈՒՍ ՍՆԱՐՔ: [illegible]

# ՎԱԶ-ը փետրվարին թանկացրել է մեքենաների գները 14 տոկոսով

ՄՈՍԿՎԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՌՈՒՍ ՍՆԱՐՔ: [illegible]

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# Յուրմալա. Բալթյան ղեկավարների հանդիպում

ՌԻԳԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Յուրմալայում անցկացվում է բալթյան երեք պետությունների ղեկավարների հանդիպում, որը նվիրված է ՆԱՏՕ-ի խաղաղապահ կորպուսի բալթյան գումարտակի ծրագրով Լատվիայի, Էստոնիայի եւ Լիտվայի զինված ուժերի համատեղ զորավարժություններին: Կուրսանտների ուսուցումը իրականացնում են դանիացի եւ բրիտանացի սպաներ: Ենթադրվում է, որ արդեն եկող տարվա սկզբներին բալթյան երկրների խաղաղարար ուժերը կկարողանան հաշտարար գործողություններ սկսել երկրագնդի թեժ կետերում, բացի ԱՊՀ-ից: Դա արգելվում է Լիտվայի սահմանադրությամբ:

■ *[illegible]*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

# Ռուս-թուրքական համաձայնագիր ահաբեկչության դեմ

[illegible]

digitised by A.R.A.R.@

